



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 134/80 « 20 » 04 2021թ.

## ԿՐԹԱԹՈՇԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Այրի Բանկ» ՓԲԸ-ի վարչության նախագահի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. «Այրի Բանկ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ, ԵՊՀ ուսանող, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Գևորգ Արշավիրի Արշակյանի անվամբ Երևանի պետական համալսարանի թվով չորս ուսանողների միանվագ 400 000 ՀՀ դրամ (յուրաքանչյուրին) կրթաթոշակ (այսուհետ՝ կրթաթոշակ) հատկացնելու նպատակով հայտարարել մրցույթ:

2. Մրցութային հայտերի ուսումնասիրության և կրթաթոշակ ստացող թվով 4 ուսանողների ընտրության նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով, հետևյալ կազմով.

- Դավիթ Ափոյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ,
- Խաչիկ Աբաջյան - ԵՊՀ ուսանողական խորհրդի փոխնախագահ (հանձնաժողովի քարտուղար),
- Տաթևիկ Վարդևանյան - «Այրի Բանկ» ՓԲԸ-ի հաղորդակցման բաժնի ղեկավար
- Ռուբեն Մխիթարյան - «Այրի Բանկ» ՓԲԸ-ի դատաիրավական բաժնի ղեկավար

3. Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել 2021 թ. օգոստոսի 25-ը: Մրցույթի պահանջների և չափանիշների սահմանման իրավասությունը պատվիրակել մրցութային հանձնաժողովին:

4. Սահմանել, որ կրթաթոշակ ստացող ուսանողներն ընտրվելու են մրցութային հանձնաժողովի որոշմամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ընտրված ուսանողներին կրթաթոշակը հատկացվելու է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

5. Մրցույթի մասին տեղեկատվությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում:

6. Սույն հրամանի մասին տեղեկացնել հանձնաժողովի անդամներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ  
ԺԱՄԱՆԱԿՎԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ